ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայ Եկեղեցու առաջնորդը միայն հոգևոր հովիվ չէ. նա մեր ազգային ինքնության խորհրդանիշն է, սրբազան ավանդության պահապանը, ազգային արժեքների անխոնջ պաշտպանը: Այս շարակարգում ակներև է դառնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հոգևոր առաջնորդի, ազգային մտածողության, հայ ժողովրդի ցավի, հույսի և համազգային միասնականության գաղափարի կրողի կերպարը: Հոգևոր առաջնորդը նա է, որ ոչ միայն Աստծու խոսքն է քարոզում, այլ ապրում է իրական հավատքի ներքին ճշմարտությամբ և նրանով ներշնչում իր ժողովրդին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի գրեթե կեսդարյա հոգևոր սպասավորությունը նրա անձնվիրումի, անսահման հայրենասիրության, եկեղեցաշեն գործունեության լուռ վկայությունն է:

Վեհափառ Հայրապետի գահակալությունը համընկավ հայության համար շատ բարդ և հակասական ժամանակաշրջանի հետ: Արցախյան պատերազմներ, Հայաստանի անկախ պետականության ամրապնդում, սփյուռքահայության հետ փոխհարաբերության և մշակութային կապերի հաստատում, հոգևոր կյանքի վերազարթոնք և ազգային ինքնության պաշտպանություն: Այս բոլոր մարտահրավերներին ի պատասխան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը հանդես եկավ որպես ճշմարիտ առաջնորդ՝ միաժամանակ լինելով դիվանագետ, խաղաղարար, ազգային շահերը բարձրաձայնող, արդարության պաշտպան:

Նրա գործունեության առանցքում դրված է հայ մարդու ինքնության պահպանման պատվիրանը՝ «Հավատք, Հայրենիք, Ազգ» երեք հիմնասյուներով:

Պատմական հիշողությունն ազգի ինքնության հիմքն է, առանց որի չի կարող լինել ապագա, ուստի Վեհափառ Հայրապետի խոսքերում հաճախ է հնչում Հայոց ցեղասպանությունը չմոռանալու, անմեղ զոհերի նահատակությունը չուրանալու և արդարության ձայն բարձրացնելու պատգամը։ Նա ևս, իր երանելի նախորդների նման, հայ ժողովրդի արդար դատը ներկայացնում է ոչ թե որպես գեթ պատմական իրողություն, այլ՝ արդարության համամարդկային խնդիր։

Վեհափառ հայրապետի համար Հայաստանը կենդանի տաճար է, սրբություն՝ իր բազմադարյա պատմությամբ, տառապած, խաչված և հարություն առած հայ ազգով, իր նվիրյալ զինվորներով ու նահատակյալ հերոս որդիներով։ Անցնող տարիներին, երբ հայ ժողովուրդը կրկին կանգնեց ծանրագույն գոյաբանական մարտահրավերների առջև, Վեհափառ հայրապետը, ինչպես միշտ, կանգնեց իր զավակների կողքին՝ որպես բարեխնամ հայր և իմաստուն առաջնորդ։ Նա, համազգային անդառնալի կորուստներից և արհավիրքներից հետո կրկին ուժ գտնելով, սփոփանքի, սիրո և հուսադրության իր ամոքող ու զորացնող խոսքն ասաց։ Հայոց հայրապետի խոսքը ոչ միայն քարոզ է, այլև զորություն, որ կարող է հալածանքի ժամանակ լինել համբերության ու խոնարհության կոչ, ցավի մեջ՝ սփոփանք, իսկ հուսալքության պահին՝ շողարձակող հույս։

Թող Բարձրյալ Տերը պահպանի և զորացնի Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ նա պահի մեր հավատի հիմնասյունը անսասան, մեր հույսը՝ կենդանի, մեր սիրո տապանը՝ անխորտակ։

Ա. ՔՀՆ. Պ.